

- 32 Ծփեալ իբրու երեք ամօք
 Զերթ նաւուղիղ լի մրրկօք
 Դիտէր զիւր նաւ ողջ նաւաստեօք
 Հանդերձ իւրեւ ընդ վըտանգօք :
- 33 Վասն այն խորհէր օր ի յօրէն
 Հրրաժարիլ իսկ ինքնօրէն
 ՅԱնկիւրիոյ հովուութենէն
 Եւ կեալ անքոյթ առանձնօրէն :
- 34 Եւ մինչ այսպէս այս անցանէր ,
 Ի Բիւզանդիոյ լուր հասանէր
 Թէ Պատրիարգ տեղւոյն խօթէր ,
 Եւ ախան որոյ մահառիթ էր :
- 35 Յորժամ զայս ինչ Սարգիս լսէր ,
 Ի սիրտ հարեալ ուժգին հեծէր ,
 Ապայ հապճեպ ուղւոյ լինէր
 Ի 'ի կոստանդեան շէն ժամանէր :
- 36 Ուր յետ ամսոց զՈւլհան բաբուն
 Որ Պատրիարգն էր նոյն Պօլսոյն ,
 Կանխեալ տանէր օրհաս մահուն
 Ի յօթեւանս հանդերձելոյն :
- 37 Այն ինչ էր մեծ կորուստ Ազգիս ,
 Բայց առաւել ողբայր Սարգիս
 Զիւր վարժապետ քաջն ի ռաբբիս ,
 Որ ոչ եւս էր կենօք յաստիս :
- 38 Էր նոյն կորուստ յիրաւ արժան
 Անմրխիթար մեծ աշխատման
 Լալեաց , ողջոց եւ հառաշման
 Հայոց Պօլսոյն կոստանդինեան :